

Զ. ՄԱՐԳԱՐՅԱՆ



ԱՐՁԻ
ՃԱՆԿԵՐՈՒՄ

ՊԵՏՅՐԱՏ

1874



12 11 11

1874

1874

2. ՄԱՐԿԱՐՅԱՆ



✓

891.99-93

ՀԱՅԿԵՐԱՆ 1 1961 թ. 7

ԱՐՋԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ

Նկարներ՝
Ա.Ն. ԳՍՄՊԱՐՅԱՆԻ



Պ Ե Տ 7 Ր Ս

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՄԱՏՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ ԹԵՐԵԿԱՆ 1938

H 2332 1662

Պատ. խմբագիր՝ Մ. Կորյուն
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

Գլավիտի լիազոր Ղ.—3504. Հրատ 446.

Պատվեր 161. Տիրաժ 4000.

Թուղթ 62×94 Տպագր. $\frac{1}{2}$ մամ.

Մեկ մամ. 19200 նիշ. Հեղինակային $\frac{1}{3}$ մամ.

Հանձնված է արտադրության 10 փետրվարի 1938

Ստորագրված է տպագրության 8 մայիսի 1938

Պետհրատի I տպարան Յերևան, Լենինի փողոց № 65



Ես վոր պատմում եմ, պատահել է սրանից
վաթսուն տարի առաջ: Մի որ իմ հորեղբայրը՝
վորսկան Ոսեփը ինձ իր հետ վորսի տարավ:

Գնացինք Դամբլուտ կոչվող հանդամասը:

Այդ հանդամասը հեռու յեր և յես հազիվ էյի
գնում հորեղբորս յետևից: Բայց քաջ գիտեյի,
վոր նա աննպատակ կերպով եսքան հեռու չի գնա
և որ չի պատահել, վոր վորսկան Ոսեփը դատարկ
ձեռքով տուն գա վորսատեղից:

Ուր վոր գնար, վորս պիտի ունենար:

Մենք անցանք Դամբլուտի տակով հոսող առ-
վակն ու նոր էյինք անտառ մտել, յերբ հորեղ-
բայրս կանգ առավ ու ինձ դիմելով, ասաց.

— Աբշակ, տեսնո՞ւմ ես, ս՛յ, արջը տանձ ա
հավաքում:

Ասաց ու մատով ցույց տվեց մեզանից վոչ
շատ հեռու գտնվող բացուսն ու տանձի հաս-
տարուն ծառը: Նայեցի այն կողմ: Նկատեցի հաս-
տարուն ծառի տակ հանդիստ կերպով տանձ խժուղ
արջին: Սիրտս դող ընկավ: Յես զգացի, վոր վախից
զու՛նատվեցի:

Նայեցի հորեղբորս դեմքին, — շատ ուրախ եր:

Նա միքիչ էլ կանգնած մնաց, գննեց արջին և բաժանող տարածությունը և դարձավ դեպի ինձ:

— Հիմա կմոտենանք արջին: Յես կկրակեմ: Վոր վրիպի, դու իսկույն կվազես ու կբարձրանաս ծառը. թե չես արջը վոր կրակոց լսեց ու կենդանի մնաց, վայն եկել տարել ե նրա ճանկն ընկնողին:

— Բա դ՞ու ինչ կանես, — հարցրի յես, նախազգալով, վոր հորեղբայրս մեծ վտանգի կենթարկվի այդ դեպքում:

— Յես իմ գլխի ճարր կտեսնեմ, — պատասխանեց հորեղբայրս ու մենք զգուշությամբ, բարձր խոտերի ու ծառերի միջով սողալով սկսեցինք մոտենալ գագանին, վոր մրթմրթալով շարունակում եր ուտել վայրի տանձր:

Արգեն շատ մոտ ելինք գագանին:

Արջը կարծես թե պերահաս վտանգ զգաց և մի պահ դադարելով ուտել, կասկածոտ հայացքով շորս կողմը նայեց, հետո շարունակեց իր գործը: Իմ վախը քանի գնում ավելանում եր:

Հորեղբայրս կամացուկ դուրս յեկավ կաղնի ծառի բնի յետևից ու նշան բռնեց: Սիրտս սկսեց արագ-արագ խփել:

Դեռ չեր լավել հորեղբորս հրացանի կրակոցը, յերբ յես շտապեցի մոտիկ ծառը բարձրանալ: Քիչ հետո ամբողջ անտառը թնդաց կրակոցից:

Դրանից հետո լսեցի արջի ուժգին գոռոցը, վախից մազերս փշաքաղկեցին: Քիչ մնաց ծառից վայր ընկնեմ:

Բայց վախս կրկնապատկվեց և լեզուս կապ ընկավ, յերբ հանկարծ տեսա, վոր արջը գոռալով յետևի փոռքերի վրա բարձրացած, փրփուրը բերնին, թռավ դեպի հորեղբայրս:

Հորեղբորս ձեռքին ել չախմախուլ կոչվող
հնամյա մի հրացան եր, փորձարձակուժեք կայծքարի
միջոցով: Ամեն անգամ կրակելուց հետո պիտի



վառող ու կոտորակ լցնելիք փողի մեջ, փողի բե-
րանը փակելիք, հետո կայծքարն ամրացնելիք...
Իսկ այս բոլորը յերկար ժամանակ եր խլում:
Խեղճ հորեղբայրս չկարողացավ ժամանակին
լցնել հրացանը և յես սարսափով տեսա, թե ինչպես

այդ հանելի գազանը իր թաթերի մեջ առավ հորեղբորս և բացելով մեծ, փրփրակալած բերանը, բռնեց նրա ուսից:

Խեղճ հորեղբայրս փորձում, չարչարվում էր, փոր ձեռքը տանի դեպի իր դաշույնը, բայց չէր կարողանում:

Արջը թույլ չէր տալիս:

Հորեղբայրս սկսեց ձեն տալ, ոգնության կանչել.

— Արշակ հեյ...

— Ոգնեցեք, ո՞վ կա, ոգնեցեք ա խալիս, արջն ինձ բռնել ւն...

Հորեղբորս աղեկատուր ու խղճալի ձայնն ինձ սթափեցրեց: Ծառից իջա: Բայց վախենում եմ մոտ գնամ:

Արջն ու հորեղբայրս կոխ են բռնել:

Արջը խեղճ մարդուն վայր է գցում գետին, իր թաթերով քոլոլում, քոլոլում, գցում, հետո փոքրի կանգնեցնում, ելի գցում, քոլոլում...

Ոսեփը տեսնելով, փոր փոչնչով չեմ կարողանում իրեն ոգնել, այս անգամ ավելի զորեղ ձայնով սկսեց ոգնության կանչել.

— Ա խալիս, փրկեցեք ա խալիս, արջն ինձ բռնելւ — ա-ա-ա — մոտակա ձորից լավեց արձագանքը:

Ելի աղաղակեց ու կանչեց:

Հորեղբորս ձայնն ամպի փորոտի նման տարածվեց ամբողջ անտառում ու խուլ արձագանք տվեց հեռվում:

Հրահր էր, ի՞նչ էր:

Միքանի վայրկյան հետո մի խուլ ձայն ենք լսում.— գալիս ենք, պինդ կաց, գալիս ենք,— հեռվից մեզ էր հասնում մի կանչ, փորը միշտ կրկրն-

վում եր և հեազհետե ավելի մոտ եր թվում ու
ավելի պարզ եր լավում:

Հասկացա վոր յեկողները հովիվներ պիտի լինեն:



Հանկարծ թանչ տալով վրա հասան վեց գամփռ
շներ: Դրանցից մեկը, վոր բուրբից գազազածն ու
անվախն եր, թռավ ու արջի ականջիցը բռնեց:
Մյուսներն ել սկսեցին յետևից գզել, կծել գազանին:

Իրանք ոգնության հասնող հովիվների շներն
եյին:

Քիչ հետո վրա հասան և իրենք՝ հովիվները:
Նրանցից մեկին յես վայրկյանապես ճանաչեցի:

Սարգիսն եր:

Եդ աժդահակն ել ժամանակ չկորցրեց, հաս-
նելուն պես դամեն հանեց ու ձեռքի ամբողջ ուժով
արջի կոնատակը խրեց:

Արջը մի անգամ սարսափելի գոռաց և բերանից
արյան ուժեղ հոսանք գուրս թափվեց:


Սարգիսը դամով մի հարված ել տվեց յերերա-
ցող արջին: Գազանը մի անգամ ել գոռաց ու գետին
փռվեց:

Եդ գազանը հորեղբորս ուն արյունովա յեր
արել, բայց ուրախ եյինք, փոր նա կենդանի մնաց:

Հորեղբայրս փոռքի կանգնեց ու սրտի խորքից
ասաց.— փառք քեզ կյանք, ես անգամ ել կենդանի
մնացի...

Ամեն անգամ, յերբ սարսափելի ու գիշատիչ
գազանների ճանկերից ազատվում եր, այդ խոսքերն
եր կրկնում հորեղբայրս:

Իրանից հետո տարիներ անցան: Հորեղբայրս
ելի շատ արկածների հանդիպեց, նրա հետ հաճախ
և յես, միասին շատ արջեր ու գազաններ սպանե-
ցինք, բայց եզ մի որը մտքիցս չի հեռանում:



11
A 2220

0226

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0003688

389

A $\frac{II}{23332}$

ԳԻՆԸ 50 ԿՊՊ.

024.



Յ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
 ԿՈՂՏՅԱԽ ՄԵԴՎԵԴՅԱ
 ԳԻՅ ԱՐՄ. ՍՍՐ, ԵՐԵՎԱՆ

Սրբ. 12401